

**«Էներգաարդյունավետ համայնքներ. Հանրային շենքերում  
Էներգախնայողության բարելավման և «կանաչ էներգիայի» զարգացմանը  
նպաստող մեխանիզմներ» ծրագիր**

**Տեխնիկական Առաջադրանք**

**Խորհրդատվական ծառայություններ մեթոդական և վերլուծական նյութերի  
մշակման և էներգաարդյունավետության տեղեկատվական միջոցառումների  
կազմակերպման, ներառյալ՝ Հայաստանի ուսումնական  
հաստատություններում դասընթացների անցկացման վերաբերյալ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ**

Հայաստանի Հանրապետությունը Կայունացման և Զարգացման Եվրասիական հիմնադրամից (ԿԶԵՀ) ստացել է ֆինանսավորում՝ «ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՆԵՐ». ՀԱՆՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ և «ԿԱՆԱԶ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման ծախսերի համար: Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (այսուհետ՝ ՀՎԷԷ հիմնադրամ, Պատվիրատու), հանդես է գալիս որպես Ծրագրի իրականացման գրասենյակ (ՕԻԳ): Ծրագրի նպատակն է նվազեցնել սոցիալական և այլ հանրային օբյեկտների էներգիայի սպառումը: Գլոբալ բնապահպանական նպատակն է կրճատել ջերմոցային գազերի արտանետումները՝ հանրային հատվածում էներգաարդյունավետ ներդրումների իրականացման խոչընդոտների վերացման միջոցով:

Ծրագրի նպատակն է բարելավել հանրային շենքերի էներգաարդյունավետությունը՝ բարձրացնելով էներգախնայողության մակարդակը, նպաստելով էներգետիկ ծառայություններ մատուցող ենթակառուցվածքների զարգացմանն ու ձևավորմանը, ինչպես նաև մարզային իշխանությունների ներկայացուցիչների շրջանում էներգախնայող վարկերի ներգրավման արդյունավետության, սկզբունքների և մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Սույն Տեխնիկական Առաջադրանքը նախատեսում է խորհրդատվական ծառայությունների մատուցում մեթոդական և վերլուծական նյութերի մշակման և էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկատվական միջոցառումների կազմակերպման համար, ներառյալ՝ դասընթացների անցկացում Հայաստանի ուսումնական հաստատություններում:

## 2. ՆՊՏՏԱԿԸ

Սույն Տեխնիկական Առաջադրանքի նպատակն է մշակել էներգաարդյունավետության մեթոդական և վերլուծական նյութեր, կազմակերպել էներգաարդյունավետության և էներգախնայող տեխնոլոգիաների նորարարական լուծումներին նվիրված տեղեկատվական արշավներ, ինչպես նաև անցկացնել էներգաարդյունավետության թեմայով դասընթացներ Հայաստանի ուսումնական հաստատություններում:

Ծառայությունների մատուցման արդյունքում կբարձրացվի մարզային իշխանությունների ներկայացուցիչների իրազեկվածության մակարդակը էներգաարդյունավետ վարկերի ներգրավման սկզբունքների և մեխանիզմների գործում:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Նշված նպատակներին հասնելու համար Խորհրդատուն պետք է իրականացնի հետևյալ առաջադրանքները՝

**Առաջադրանք 1. – Մշակի էներգաարդյունավետության մեթոդական և վերլուծական նյութեր (ԷԱ), այդ թվում՝**

- 1.1. Մշակի ԷԱ իրազեկման բարձրացման և տեղեկատվական նյութեր (200 գրքույկ (մոտ 10-15 էջ, Խորհրդատուի կողմից որոշված ձևաչափով), ՀՎԷԷ հիմնադրամի հաջողության պատմության, ԷԱ-ի օգուտների և այլնի մասին, այդ թվում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի միջոցառումների առավելությունների, Ծրագրի փաստացի արդյունքների, Ծրագրի ներքո էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման ընթացքում կիրառված նորարարությունների մասին;
- 1.2. Նախապատրաստի և տարածի էլեկտրոնային հարցաթերթիկ (կազմված 10-15 հարցից, 1-2 էջ)՝ գնահատելու մասնակիցների ընկալման աստիճանը և իրազեկման բարձրացման արշավի ընթացքում ձեռք բերած գիտելիքները: Թիրախային խումբը (մոտ 200 հոգի) բաղկացած կլինի մարզպետարանների աշխատակիցներից, մարզերի բնակիչներից;
- 1.3. Մշակի ուսումնական նյութ, մեթոդական պլան/ձեռնարկ՝ ուսումնական հաստատություններում դասընթացների անցկացման նպատակով;
- 1.4. Համաձայնեցնի՝ (1) տեղեկատվական նյութերի, մեթոդական և վերլուծական նյութերի բովանդակությունը; (2) հարցաթերթիկի կը; (3) դասընթացների անցկացման ժամանակացույցը Պատվիրատուի հետ;

**Առաջադրանք 2. Կազմակերպի իրազեկման արշավներ էներգաարդյունավետության և էներգախնայողության տեխնոլոգիաների**

### **նորարարական լուծումների վերաբերյալ**

2.1. Իրականացնի ԷԱ իրագեկման միջոցառումներ (մոտ 10 միջոցառում) առնվազն 3 համայնքում/մարզերում (գտնվելու վայրը – համայնքի/մարզի վարչական շենքե);

**Առաջադրանք 3. Անցկացնի 10 թրեյնինգ/միջոցառում այս թեմայով՝ Հայաստանի ուսումնական հաստատություններում և մարզային վարչական մարմիններում, այդ թվում՝**

3.1 Անցկացնի մոտ 10 փորձնական դասընթացներ ուսումնական հաստատություններում: Թիրախային խումբը կազմված կլինի (մոտ 100 հոգի) ուսանողներից, դասախոսներից, հրավիրված փորձագետներից: Բոլոր մասնակիցներին կտրվեն մասնակցության վկայականներ (80% մասնակցության դեպքում):

Կատարված առաջադրանքների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները խորհրդատուն կներառի համապատասխան հաշվետվությունների մեջ: Հաշվետվության բովանդակային կառուցվածքի մասին տեղեկությունը ներկայացված է «Արդյունքներ և հաստատման ընթացակարգեր» կետում:

### **4. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**

#### **Արդյունք 1: Խորհրդատուի Առաջընթացի հաշվետվություն # 1**

Հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություններ էներգաարդյունավետության վերաբերյալ մշակված մեթոդական և վերլուծական նյութերի մասին, այդ թվում՝

- 200 գրքույկ ՀՎԷԷ հիմնադրամի հաջողության պատմության, ԷԱ-ի օգուտների, ԷԱ և ՎԷ միջոցառումների առավելությունների, Ծրագրի արդյունքների և այլնի մասին;
- Էլեկտրոնային հարցաթերթիկ (կազմված 10-15 հարցից, 1-2 էջ);
- Ուսումնական նյութեր;

**Արդյունք 1-ի ներկայացման վերջնաժամկետ.** Ծառայությունների մատուցման մեկնարկից՝ 1 ամիս:

#### **Արդյունք 2: Խորհրդատուի Առաջընթացի հաշվետվություն #2**

Հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություններ էներգաարդյունավետության և էներգախնայող տեխնոլոգիաների նորարարական լուծումներին վերաբերող տեղեկատվական արշավների կազմակերպման և անցկացման մասին համայնքներում/մարզերում, այդ թվում՝

- Միջոցառման մասնակիցների ցանկ;
- Միջոցառման մանրամասն նկարագրություն, ներառյալ՝ ամսաթիվ, վայր, մասնակիցների թիվ;

- Իրազեկման արշավի ձեռքբերումներ /արդյունքներ;

**Արդյունք 2-ի ներկայացման վերջնաժամկետ.** Ծառայությունների մատուցման մեկնարկից՝ 2 ամիս

**Արդյունք 3:** Խորհրդատուի Առաջընթացի հաշվետվություն # 3

Հաշվետվության մեջ պետք է ներառել Հայաստանի ուսումնական հաստատություններում անցկացված դասընթացների/միջոցառումների արդյունքները:

- Դասընթացների/միջոցառումների մասնակիցների ցանկը;
- Վկայականներ ստացած մասնակիցների թիվը;
- Դասընթացի մանրամասն նկարագրությունը՝ ներառյալ ամսաթիվը, վայրը, մասնակիցների թիվը, դասախոսության թեման;

**Արդյունք 3-ի ներկայացման վերջնաժամկետ.** Ծառայությունների մատուցման մեկնարկից՝ 4 ամիս

**Արդյունք 4:** Խորհրդատուի Ավարտական հաշվետվություն

Ավարտական հաշվետվությունը պետք է ներառի Առաջադրանք 1-ի, 2-ի և 3-ի ամփոփ նկարագրությունը և արդյունքները: Այն պետք է պարունակի ամբողջական տեղեկատվություն «Խորհրդատվական ծառայություններ մեթոդական և վերլուծական նյութերի մշակման և էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկատվական միջոցառումների կազմակերպման, այդ թվում՝ Հայաստանի ուսումնական հաստատություններում» առաջադրանքի ներքո հանրային իրազեկման փաստացի իրականացված միջոցառումների մասին, ինչպես նաև սույն Տեխնիկական Առաջադրանքում նշված բոլոր գործողությունների/միջոցառումների/դասընթացների անցկացման, դրանց ժամկետների, ձեռնարկված քայլերի և այդ միջոցառումների արդյունքների վերաբերյալ»:

**Արդյունք 4-ի ներկայացման վերջնաժամկետ.** Արդյունք 3-ի ավարտից և ներկայացնելուց՝ 1 ամիս

Առաջադրանքի ընդհանուր տևողությունը **5 ամիս է:** Խորհրդատուն կարող է առաջարկել իրականացման իր ժամանակացույցը: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն հայերեն և ռուսերեն՝ տպագիր (երկու օրինակ, յուրաքանչյուր լեզվով մեկական) և էլեկտրոնային տարբերակով:

Բոլոր հաշվետվությունները պետք է ուսումնասիրվեն և մեկնաբանվեն ՀՎԷԷ հիմնադրամի կողմից՝ ներկայացնելուց հետո տասնչորս օրվա ընթացքում:

ՀԻՄՆՎԵԼՈՎ ՄՍՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ՝ ԽՈՐՀՐԴՍՏՈՒՆ ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԸՍՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ՍՏՈՐԱԳՐՎԻ ԿՈՂՄԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2 (ԵՐԿՈՒ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ԿՈՂՄԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԱՅՆ ՓԱՍՏԸ, ՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ԽՈՐՀՐԴՍՏՈՒՆԻ ԿՈՂՄԻՑ և ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԻ ԿՈՂՄԻՑ:

## 5. ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սույն առաջադրանքի իրականացման ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին կտրամադրի հետևյալ աջակցությունը՝

- Ծրագրի հետ կապված ցանկացած տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել դասընթացների ընթացքում (ծրագրի շրջանակներում իրականացված էներգաարդյունավետության միջոցառումների օրինակներ);
- Ծրագրով հետաքրքրված ուսումնական հաստատությունների երկար ցուցակը և թիրախային հաստատություններում տեղեկատվական արշավների և դասընթացների անցկացումը:

## 6. ԽՈՐՀՐԴՍՏՈՒՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Որակավորման պահանջներ Ընկերության համար՝

- Մեթոդական փաստաթղթերի և ուսումնական նյութերի մշակման փորձ (2 նմանատիպ պայմանագիր վերջին 5 տարվա ընթացքում);
- Էներգետիկ ոլորտում դասընթացների անցկացման փորձ (2 նմանատիպ պայմանագիր վերջին 5 տարվա ընթացքում);
- Էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկ ոլորտի ծրագրերի մեթոդական փաստաթղթերի և ուսումնական նյութերի պատրաստման փորձ;

Խորհրդատուի հիմնական անձնակազմը պետք է բաղկացած լինի առնվազն հետևյալ մասնագետներից՝

- Թիմի ղեկավար
- Էներգաարդյունավետության փորձագետ (դասընթաց վարող)
- Վերականգնվող էներգիայի փորձագետ (դասընթաց վարող)

Խորհրդատուն կարող է ներգրավել նաև ոչ հիմնական/աջակցող անձնակազմի (օրինակ՝ ծրագրի օգնական, հանրային կապերի մասնագետ):

Հիմնական անձնակազմի որակավորման պահանջներ՝

### Խմբի ղեկավար

- Բարձրագույն կրթություն էներգետիկայի, ճարտարագիտության, կամ նմանատիպ այլ ոլորտում;
- Դասընթացների կազմակերպման, ուսուժական նյութերի մշակման փորձ (2 նմանատիպ պայմանագիր վերջին 5 տարվա ընթացքում);
- Էներգետիկ ոլորտում վերապատրաստման դասընթացների պայմանագրերի ղեկավարման և ուսուժական նյութերի մշակման 3 տարվա փորձ (առնվազն 2 պայմանագիր):

#### **Էներգաարդյունավետության փորձագետ (դասընթաց վարող)**

- Բարձրագույն կրթություն էներգետիկայի կամ ճարտարագիտության ոլորտում;
- Էներգաարդյունավետության վերաբերյալ ուսուժական նյութերի մշակման փորձ (2 նմանատիպ պայմանագիր վերջին 5 տարվա ընթացքում):

#### **Վերականգնվող էներգետիկայի փորձագետ (դասընթաց վարող)**

- Բարձրագույն կրթություն էներգետիկայի կամ ճարտարագիտության ոլորտում;
- Վերականգնվող էներգիայի վերաբերյալ դասընթացների կազմակերպման, ուսուժական նյութերի մշակման փորձ (2 նմանատիպ պայմանագիր):